

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուլգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Սեյրան Չաքարյան</b> - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
<b>Сейран Закарян</b> - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
<b>Seyran Zakaryan</b> - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
<b>Հասմիկ Ամիրջանյան</b> - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
<b>Асмик Амирджанян</b> - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
<b>Hasmik Amirjanyan</b> - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
<b>Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան</b> - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԸ ԼԵՒ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
<b>Вардан Мхитарян, Гохар Гамбарян</b> - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
<b>Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan</b> - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
<b>Լիլիթ Մակարյան</b> - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
<b>Лилит Макарян</b> - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
<b>Lilit Makaryan</b> - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
<b>Ֆելիքս Մովսիսյան</b> - ՌՈՒՄԱՅԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
<b>Феликс Мовсисян</b> - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
<b>Felix Movsisyan</b> - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
<b>Սուսաննա Առաքելյան</b> - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

<b>Сусанна Аракелян</b> – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896. ....	87
<b>Susanna Arakelyan</b> – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896. ....	87
<b>Գեղամ Բաղայան</b> – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
<b>Гегам Бадалян</b> – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды). ....	115
<b>Gegham Badalyan</b> – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir). ....	115
<b>Աննա Վարդանյան</b> – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ .....	117
<b>Анна Варданян</b> – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ. ....	123
<b>Anna Vardanyan</b> – DIANA ABGAR - “MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. ....	124
<b>Գայանե Հովհաննիսյան</b> – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ .....	125
<b>Гаяне Оганнисян</b> – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г. ....	132
<b>Gayane Hovhannisyan</b> – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926). ....	133
<b>Արտակ Խաչատրյան</b> – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
<b>Артак Хачатрян</b> – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
<b>Artak Khachatryan</b> – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917). ....	141
<b>Մանյակ Երանոսյան</b> – ՀԱԿՈԲ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) .....	142
<b>Маняк Ераносян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
<b>Manyak Yeranosyan</b> – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER). ....	150

<b>Գևորգ Կեսոյան</b> - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
<b>Геворг Кесоян</b> - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
<b>Gevorg Kesoyan</b> - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
<b>Արման Սաֆարյան</b> - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
<b>Арман Сафарян</b> - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
<b>Arman Safaryan</b> - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
<b>Սարգիս Սկրտչեան</b> - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
<b>Саргис Мкртчян</b> - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
<b>Sargis Mkrtchian</b> - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
<b>Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան</b> - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
<b>Мери Наджарян, Рипсима Мурадян</b> - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
<b>Meri Najaryan, Hripsime Muradyan</b> - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
<b>ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY</b>	
<b>Գևորգ Եաղարյան</b> - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
<b>Геворг Тшагарян</b> - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
<b>Gevorg Tshagharian</b> - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
<b>Լիզա Քարիմյան</b> - ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
<b>Лица Каримян</b> - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ “КОНТАКТНОЙ” ЗОНЫ В. АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

**Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE.** ..... 217

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.)** ..... 218

**Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.)** ..... 222

**Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS).** ..... 223

**Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ)** ..... 228

**Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.)** ..... 235

**Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY).** ..... 235

**ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ** ..... 237

**Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА.** ..... 247

**Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS.** ..... 248

**Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ.** ..... 249

**Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США.** ..... 257

**Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA.** ..... 257

**Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ** ..... 259

**Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА.** ..... 272

**Edik Minasyan – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.** ..... 273

**Կարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ** ..... 274

**Карен Мкртчян – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.** ..... 280

**Karen Mkrtchyan – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.** ..... 281

**ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY**

**Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ)**..... 282

**Мери Оганнисян – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.** ..... 289

**Meri Hovhannisyanyan – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.** ..... 289

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

Էրիկ Գալեգիսի ՄիլաՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 էջ + 16 էջ ՆԵՐՂԻՐ:..... 291

ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 293

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 էջ:..... 295

**ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴՆԵՐ** ..... 298

**ՄԱՀ ԻՍԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ** ..... 315

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 318

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 320

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 322

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 322

## Ֆելիքս Մովսիսյան

### ՌՈՒՄԱՅԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

*Հիմնաբառեր. Իտալիա, ռիսորջիմենտո, ազգային պայքար, ազատագրություն, անկախություն, Ավստրիա, Պիեմոնտ, Ֆրանսիա, Ջ. Գարիբալդի:*

1815 թ. Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտով իտալական պետությունները պահպանեցին քաղաքական մասնատվածությունը և շարունակեցին մնալ Ավստրիական կայսրության տիրապետության տակ: Չնայած դրան՝ իտալական պետություններում չհաշտվեցին ստեղծված իրողության հետ և շարունակեցին հետևողական պայքար մղել ազգային անկախություն ձեռք բերելու համար: 1815-1820 թթ. իտալական պետություններում լայն տարածում գտան կարբոնարների գաղտնի ընկերությունները, որոնք Ֆիլիպպո Բուոնարրոտիի գլխավորությամբ ազատագրական շարժում սկսեցին<sup>1</sup>: Դրան հաջորդեցին 1820-1821 թթ. կարբոնարների գլխավորած ազատագրական պայքարը Նեապոլիտանական թագավորությունում, ազգային շարժումը՝ Սարդինական թագավորությունում և 1831 թ.՝ քաղաքական պայքարը Կենտրոնական Իտալիայում<sup>2</sup>: 1831 թ. ամռանը իտալական ռիսորջիմենտոյի ղեկավարներից Ջուզեպպե Մացցինիի հիմնած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպությունը, որը նպատակ էր հետապնդում հասնել «Հայրենիքի միասնությանը, անկախությանը և իրական ազատությանը», սկիզբ դրեց ազգային-ազատագրական շարժման նոր փուլի<sup>3</sup>: 1848 թ. հունվարին Սիցիլիայում բռնկված ազատագրական պայքարը շատ արագ ընդգրկեց իտալական բոլոր պետությունները: Իտալական ազգային-ազատագրական պայքարը լայն արձագանք գտավ ժամանակի ոչ միայն եվրոպական, այլև հայ պարբերական մամուլում, այդ թվում՝ Ռուսաստանում լույս տեսնող հայկական պարբերականներում: Նրանց դիրքորոշումն այս հարցում հայ պատմագրությունում առ այսօր հիմնավոր ուսումնասիրված չէ: 1850-ական թթ. երկրորդ կեսին և 1860-ական թվականների սկզբին Ռուսաստանում լույս տեսած «Ճռաքաղ», «Հյուսիսսափայլ», «Մասյաց աղավնի», «Համբավաբեր ռուսիո», «Հյուսիս» պարբերականները իրենց հրապարակումներում անտարբեր չմնալով 1859 թ. սկսված իտալական ազատագրական պայքարի նկատմամբ այս կամ այն չափով անդրադարձել են նաև 1848 թ. պայքարին: Այդ պարբերականներից 1858-1862 թթ. Մոսկվայում լույս տեսած ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Ճռաքաղ» երկշաբաթաթերթը (1860 թ. ամսագիր) նպատակ էր հետապնդում հոգևոր դաստիարակություն տալ իր ընթերցողներին: Պարբերականի խմբագիր-հրատարակիչներ Մսեր և Չարմայր Մսերյանները թեպետ պատմական իրադարձությունների նկատմամբ հետաքրքրություն էին դրսևորում, բայց իտալական ազատագրական պայքարի նկատմամբ անհաղորդ մնացին: Նախապատվությունը տալով իտալական պետություններում առկա կրոնական խնդիրներին՝ ամսագիրն իտալացիների պայքարի օրերին գրում է Հյուսիսային Իտալիայում «Ավետարանական ընկերության» ներգործության թուլացման մասին, որը համարում է «անդամնալի կորուստ»: Դրա պատճառը «Ճռաքաղը» համարում է «քաղաքական

\* Հոդվածը ներկայացվել է 12.05.2020 թ., գրախոսվել՝ 26.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Ковальская М. И., *Движение карбонариев в Италии 1808-1821 гг.*, М., 1971.

<sup>2</sup> Տե՛ս Канделоро Дж., *История современной Италии.*, пер. с. ит., т. 2, М., 1961, с. 98-144; Берти Д., *Демократы и социалисты в период Рисорджименто*, М., 1965, с. 172.

<sup>3</sup> Տե՛ս Берти Д., *Լշվ. աշխ.*, էջ 193; Кирова К. Э., *Концепция итальянской революции в ранних работах Мадзини (1831-1833).* - В кн: «Из истории социально-политических идей», М., 1955. Кирова К. Э. *Джузеппе Мадзини и утопический социализм (1830-1840).* - В кн: «История социалистических учений», М., 1964.

հանգամանքների փոփոխությունը», թեև չի պարզաբանում, թե ի՞նչ փոփոխություններ նկատի ունի<sup>1</sup>: 1861-1864 թթ. Մոսկվայում հրատարակած «Համբավաբեր ռուսիո» թերթում Մ. և Չ. Մսերյանները քաղաքական մի քանի հրապարակումներում անդրադարձան իտալական ազատագրական պայքարին: «Համբավաբեր ռուսիոն» իտալացիների պայքարը ներկայացնում է ոչ թե սոսկ պատմիչ, այլ բացահայտում է նրանց պայքարի բնույթը, նպատակը և չի խուսափում դրան քաղաքական գնահատական տալուց: Թերթը իրատեսորեն վերլուծում է Եվրոպայի քաղաքական իրավիճակը և իրավացիորեն փաստում, որ 1815 թ. Վիեննայի դաշնագրությամբ Եվրոպական երկրներում վերահաստատված նախկին միապետական կարգերի «ամենափոքր քակտումը երևում էր անօրինակ յանցանք»<sup>2</sup>: Շատերը մտածում էին, որ այդ դաշնագրությամբ Եվրոպայում հաստատված քաղաքական վիճակը «պիտի մնայ անշարժ նոյն կետի վերայ»: Բայց 1830 և 1848 թթ. «ազգային բողոք-մունքներ» տեղի ունեցան, որոնք «յայտնի բողոք էին» Եվրոպայում սահմանված ստատուս քվոյի դեմ:

«Համբավաբեր ռուսիոյի» գնահատականով՝ 1830-1840-ական թթ. ազատագրական պայքարի ելած Եվրոպական ժողովուրդների արդարացի ընդլուծումները «չկարողացան քանի մը դահիճների հնացեալ քաղաքականութիւնը ուղղել»<sup>3</sup>: Ազգային պայքարի ելած ժողովուրդները չկարողացան փոխել Եվրոպական պետությունների քաղաքականությունը, որոնք հավատարիմ մնալով Վիեննայի վեհաժողովի սկզբունքներին, առաջ քաշեցին իրենց «հրաւանց պահպանութեան» հարցը: Թերթի դիտարկամբ՝ դա ընդունելի չէ, քանի որ «մարդկութիւնը շատ առաջ է գնացել Վիեննայի ժողովի գաղափարներից ու ժամանակներից»<sup>4</sup>: Դրա վկայությունը «Համբավաբեր ռուսիոն» համարում է Եվրոպական ճշվող ժողովուրդների ոտքի ելնելը, որոնք նպատակ էին հետապնդում թոթափել օտարի դարավոր տիրապետությունը: Եվրոպայի քաղաքական վիճակը վերլուծելիս «Համբավաբեր ռուսիոն» թեպետ պայքարի ելած ճշվող ժողովուրդների թվում չի հիշատակում 1830 թ. բելգիական և 1831 թ. լեհական ապստամբությունները, բայց կարևորում է 1848 թ. իտալական պայքարը: Թերթն իտալացիների ըմբոստության և զենք վերցնելու գլխավոր պատճառը համարում է իտալական պետությունների քաղաքական մասնատվածությունը, որը սահմանվել էր 1815 թ. Վիեննայի վեհաժողովում: Թերթն իրավացիորեն<sup>5</sup> գրում է, որ վեհաժողովի եզրափակիչ ակտով Լոմբարդիան և Վենետիկը գտնվում էին Ավստրիայի տիրապետության տակ, Պարմայի, Մոդենայի, Տոսկանայի դքսություններում վերահաստատվել էին Հաբսբուրգների արքայատոհմի ներկայացուցիչները, Նեապոլիտանական թագավորությունում իշխում էին Բուրբոնները և միայն Պիեմոնտի փոքրիկ թագավորությունն էր պատկանում Սափոյան արքայատոհմին: Վերջինիս գոյության համար Վիեննայի վեհաժողովում բավական երկար վիճեցին և միայն ռուսաց կայսր Ալեքսանդր առաջինի «թախանձանքը հարկադրեց Ավստրիային Սափոյան տոհմը թողնելու տիրապետող տոհմերի ցուցակի մեջ»<sup>6</sup>:

«Համբավաբեր ռուսիոն» Պիեմոնտի թագավորությունում Սափոյան արքայատոհմի վերահաստատման հարցում թույլ է տալիս անճշտություն: Այդ արքայատոհմը պահպանվեց ոչ թե ռուսաց կայսր Ալեքսանդր Առաջինի խնդրանքով, այլ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Շառլ Մորիս Թալերյանի առաջ քաշած լեզիթիմիզմի սկզբունքի և 1814 թ. մայիսի 30 Փարիզի հաշտության պայմանագրի համաձայն, ըստ որի՝ Եվրոպայում Նապոլեոն Բոնապարտի նվաճումների հետևանքով կործանված բոլոր միապետությունները պետք է վերականգնվեին իրենց գահերին<sup>7</sup>: Վիեննայի վեհաժողովում Ռուսաստանը միակ

<sup>1</sup> Տե՛ս «Ճռաբար», Մոսկվա, 1860, հատոր Բ, տետրակ Ժ, էջ 168-169:

<sup>2</sup> «Համբավաբեր ռուսիո», Մոսկվա, 1862, 1 նոյեմբերի, թիվ 34, էջ 4:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս Зак Л., *Монархи против народов*, М., 1966, с. 288-289; А. Дебидур. *Дипломатическая история Европы. 1814-1878. Перевод с фр., том I*, М., 1995, с. 72-73.

<sup>6</sup> «Համբավաբեր ռուսիո», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 44:

<sup>7</sup> Տե՛ս Зак Л., *Այվ. աշխ.*, էջ 39, 164; *История дипломатии. Составитель А. Лактионов*, М., 2009, с. 423.

պետությունն էր, որ տարածքային որևէ հավակնություն չուներ Իտալիայում և շահագրգռված էր ի դեմս իտալական պետությունների տեսնել դաշնակից, որը կապված չլիներ Չաբսբուրգների տան հետ<sup>1</sup>: Ռուս դիվանագետները թեպետ կապեր էին պաշտպանում իտալական գաղտնի ընկերությունների ներկայացուցիչների հետ, բայց և այնպես Վիեննայի վեհաժողովում իտալական հարցում արտաքուստ վարում էին զգույշ քաղաքականություն, իսկ Ալեքսանդր Առաջինը չէր ցանկանում դավաճանել լեգիթիմզմի սկզբունքներին<sup>2</sup>: Ըստ «Չամբավաբեր ռուսիոյի», Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Չոմմեական պետությունում կառավարող կաթոլիկ աշխարհի քահանայապետ Չոմմի պապերը դարձան «աշխարհական թագավորներ», ովքեր ունեին նախարարներ, զորք, քաղաքային ոստիկանություն և այլն: Թերթի դիտարկմամբ՝ քաղաքական մասնատվածությունը Իտալիան դարձրեց «մի այլանդակ խառնուրդ, որի մեջ իհարկե չկայր և ոչ մի հաստատուն կետ նպատակի, բացի միոյ գլխաւորէ, որ էր Աւստրիայի գերակայութիւն»<sup>3</sup>: Թերթի կարծիքով Չոմմի պապն անգամ «հպատակում էր այդ տերութեան», քանի որ թույլ էր տվել Ավստրիային զորք պահել Բոլոնիայում և Ֆերարայում: Նրանք իրենց «աշխարհական իշխանությունը համառությամբ պահպանում են» շնորհիվ 1849 թ. Չոմմում գտնվող Ֆրանսիական կայազորի: Ցանկացած գործողություն՝ ընդդեմ այդ զորագնդի համարվում էր հարձակում Ֆրանսիայի վրա<sup>4</sup>: Թերթն իրավացի է այնքանով, որ Վիեննայի վեհաժողովի որոշմամբ Չոմմի պապը, թեև ձեռք բերեց Ռավեննան, Բոլոնիան և Ֆերրարան, բայց Ավստրիան այնտեղ զինվորական կայազորներ պահելու իրավունք ստացավ<sup>5</sup>: 1849 թ. Չոմմի հանրապետության անկումից հետո Ֆրանսիան Պապի անվտանգությունը պաշտպանելու պատրվակով Չոմմում կայազոր պահեց<sup>6</sup>:

1848 թ. մարտին Վիեննայում բռնկված հեղափոխության լուրը Ապենինյան թերակղզի հասնելուն պես իտալական պետությունները ոտքի ելան Չաբսբուրգների ատելի լուծը թոթափելու համար<sup>7</sup>: Այս իրողությունը փաստում է «Չամբավաբեր ռուսիոն», ըստ որի՝ 1848-1849 թթ. եվրոպական իրադարձությունները «մի փոքր փոփոխեցին» իտալական պետությունների վիճակը: Ավստրիական կայսրության դեմ «ընդհանուր ապստամբության ծագեցաւ», որը վերածվեց արյունահեղ պատերազմի «ապստամբած Իտալիոյ և Աւստրիոյ միջում»: Այդ պայթարը գլխավորեց Պիեմոնտի թագավորությունը և հակառակ «Ավստրիոյ ինքնիշխանութեան, համարձակեցաւ մուծանել իւր մէջ Սահմանադրութիւն»<sup>8</sup>: Թերթը նկատի ունի 1848 թ. մարտի 4-ին Պիեմոնտի թագավոր Կառլ Ալբերտի շնորհած այսպես կոչված «Ալբերտյան ստատուտը»: 1830 թ. ֆրանսիական սահմանադրության օրինակով կազմված այս սահմանադրությունը<sup>9</sup>, Իտալիայի միավորումից հետո, որոշ փոփոխություններով շուրջ հարյուր տարի մնաց երկրի գլխավոր օրենքը<sup>10</sup>: «Չամբավաբեր ռուսիոյի» կարծիքով այս սահմանադրության հռչակումով Պիեմոնտի թագավորությունը իտալական պետություններին «որպես թէ հրաւիրում էր թոթափել Ավստրիոյ լուծը»<sup>11</sup>:

Չանդրադառնալով 1848-1849 թթ. իտալական ազատագրական պայթարի մանրամասնություններին՝ «Չամբավաբեր ռուսիոն» գրում է, որ այդ պատերազմում «հարստահարելոց միջում միաբանութիւն չկայր, այլ տերութիւնք միտք չունեին պաշտպանել հասարակապետութիւնը»<sup>12</sup>, ուստի իտալացիները պարտություն կրեցին: Թերթը նկատի ունի

<sup>1</sup> *Տէ'ս Բերտի Դձ.*, *Россия и итальянские государства в период Рисорджименто*. М., 1959, с. 180.

<sup>2</sup> *Տէ'ս Զակ Լ.*, *Նշվ. աշխ.*, էջ 160:

<sup>3</sup> «Չամբավաբեր ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

<sup>4</sup> *Տէ'ս Նոյն տեղում*, 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

<sup>5</sup> *Տէ'ս Զակ Լ.*, *Նշվ. աշխ.*, էջ 196, 289:

<sup>6</sup> *Տէ'ս "История Италии"*, под ред. К. Ф. Мизиано, том 2, М., 1970, с. 210.

<sup>7</sup> *Տէ'ս Նոյն տեղում*, էջ 168-172; «История XIX века», под ред. Лависса и Рамбо, М., 1938, т. 5, с. 51.

<sup>8</sup> «Չամբավաբեր ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

<sup>9</sup> *Տէ'ս "Конституции буржуазных стран"*, том I, М.-Л., 1935.

<sup>10</sup> *Տէ'ս "История Италии"*, т. 2, էջ 168:

<sup>11</sup> «Չամբավաբեր ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

<sup>12</sup> *Նոյն տեղում*:

ավստրիական տիրապետության դեմ պայքարի ելած իտալական պետությունների անհամախմբվածությունն ու անմիաբանությունը, որոնք օգնության չհասան Յոզեֆի հանրապետությանը, որը ֆրանսիական զորքի հարձակման հետևանքով 1849 թ. հուլիսի 3-ին անկում ապրեց<sup>1</sup>:

Իտալական ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ առավել ընդգծված հետաքրքրություն է դրսևորել 1860-1865 թթ. Թեոդոսիայում լույս տեսած «Մասյաց աղավնի» ամսագիրը: Դրա խմբագիր, հայ ազգային-պահպանողական հոսանքի երևելի դեմքերից Գաբրիել Այվազովսկին իտալացիների պայքարի նկատմամբ անտարբեր չէր դեռևս 1848 թ. ազատագրական պատերազմի տարիներին, երբ Վենետիկում խմբագրում էր Մխիթարյան միաբանների «Բազմավեպ» հանդեսը: «Վենետիկ քաղաքին նոր ազատությունը» վերնագրով հոդվածում Գ. Այվազովսկին, որպես իրադարձությունների անմիջական ականատես, հավաստում է, որ Վենետիկի «խաղաղասեր ու բարեսիրտ» ժողովուրդը, մարտի 17-ին սուրբ Մարկոսի հրապարակում տոնախմբություն կազմակերպեց: «Ազատութեան սիրոյն կրակով» տոգորված վենետիկցիները ամենուրեք պարզեցին Իտալիայի ազգային եռագույն դրոշը: Բայց «Ափսոս, որ այն օրվան ուրախութիւնը բոլորովին առանց տրտմութեան չվերջացավ»<sup>2</sup>: Վենետիկցիները իրենց «փառավոր ու հոյակապ» քաղաքում թեև հանրապետություն հռչակեցին, բայց ավստրիական զորքը շուտով ճնշեց նրանց ազատության համար պայքարը: Գ. Այվազովսկին նրանց պայքարի հետագա ընթացքին չի անդրադառնում և նախընտրում է պահպանել Մխիթարյանների «բռնած ուղղությունը», որը միշտ կաշկանդում էր իր «հեղինակների գրիչը, միշտ արգելք է եղել նոցա ազատ և բազմակողմանի զարգացմանը»<sup>3</sup>:

1849 թ. սկզբին «Բազմավեպի» խմբագրությունից, իսկ 1856 թ. Մխիթարյաններից հեռացած և հայ առաքելական եկեղեցի վերադարձած Գ. Այվազովսկին<sup>4</sup> որևէ կաշկանդվածություն չունեցավ Վենետիկի հայ կաթոլիկ միաբանների գաղափարական հայեցակարգերին հավատարիմ մնալու հարցում: Դա առավել ակնհայտ դրսևորվում է հատկապես իտալացիների ազատագրական պայքարի վերաբերյալ նրա դիրքորոշման մեջ: «Մասյաց աղավնի» ամսագրի քաղաքական հրապարակումները ցույց են տալիս, որ Գ. Այվազովսկին իտալական հարցում չի դավաճանել իր հիմնական հայեցողությանը<sup>5</sup>: Նա իտալացիների պայքարի ելնելու գլխավոր պատճառը համարում է ավստրիական իշխանությունների կողմից նրանց նկատմամբ մշտապես իրականացրած քաղաքական, տնտեսական և հոգևոր ճնշումներն ու շահագործումը, Լոմբարդո - Վենետիկյան նահանգում «բռնած կառավարութեան կերպը, Իտալիոյ մնացեալ տերութեանց վերայ ըրած պահանջմունքները»<sup>6</sup>: Գ. Այվազովսկին իրավացիորեն գրում է, որ իտալացիների գեներալները և պայքար սկսելու խնդիրը ինքնին նոր չէ: Նրանք իրենց «ատելութիւնը Ավստրիոյ դէմ» ցույց են տվել մինչ 1848 թվականը «և քանի մը անգամ անկէ առաջ», որի հետևանքով «խեղճ Իտալիան ծայրէ ի ծայր տակն ու վրայ եղած է»<sup>7</sup>:

«Մասյաց աղավնու» համոզմամբ, «Աւստիոյ լուծը խեղճ Իտալիոյ վերայ» հանգեցրեց նրան, որ 1848 թ. «Իտալիան արթնացավ» շնորհիվ Պիեմոնտի թագավոր Կառլ Ալբերտի: Նա «զոհեց քաջութեամբ իր ազգականաց սերը՝ Իտալացւոց սիրոյն համար և գլուխ կեցաւ ազատութեան»<sup>8</sup>: Այդ պայքարում իտալացիները պարտվեցին, որովհետև «դեռ բաւական զօրացած չէր ազգասիրութեան ոգին Իտալացւոց սիրտը», ուստի Կարլ Ալբերտը ստիպված

<sup>1</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 203-206; Лурье А.Я., Гарибальди, М., 1939, с. 132. «История XIX века», т. 5, էջ 70:

<sup>2</sup> «Բազմավեպ», Վենետիկ, 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 136:

<sup>3</sup> Երիցյան Ա., Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիզ, 1883, էջ 131:

<sup>4</sup> Տե՛ս Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. 2, Գահիրե, 1933, էջ 67:

<sup>5</sup> Տե՛ս Կարինյան Ա., Ավնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Ե., 1960, էջ 378:

<sup>6</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա., էջ 18:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ., էջ 118-119:

եղավ գահից հրաժարվել և մահանալ տարագրության մեջ<sup>1</sup>: Ճիշտ ներկայացնելով իտալական ազատագրական առաջին պատերազմի և Պիեմոնտի թագավորի վախճանը<sup>2</sup>, «Մասյաց աղավնին» իրավացիորեն գրում է, որ 1848 թ. ավստրո - իտալական պայքարի արդյունքում միայն Պիեմոնտի թագավորությունը «սահմանադրական կառավարութիւն հաստատելով ազատ մնաց Աւստրիոյ ազդեցութենէն և այն ժամանակէն Աւստրոյ դէմ միշտ թշնամութիւն կը ցուցնէր և պատերազմի կպատրաստուէր»<sup>3</sup>: «Մասյաց աղավնին» նկատի ունի 1820-1840-ական թվականների իտալական ազգային պայքարը, որը կարբոնարների գաղտնի ընկերությունները և հայրենասիրական ուժերը ծավալեցին Նեապոլիտանական և Սարդինական թագավորությունում և Կենտրոնական Իտալիայում<sup>4</sup>: Ամսագրի կարծիքով 1848 թ. սկսված ազատագրական պայքարի արդյունքում Սարդինական թագավորությունը «գրեթե բոլոր իտալացի ազգասիրաց սիրտը գրավեց», բացի Չ. Մացցինիի հետևորդներից, որոնց «միտքը այս է, որ Իտալիոյ ամէն կողմը ազատ հասարակապետութիւններ հաստատեն»<sup>5</sup>: «Մասյաց աղավնին» իրավացի է, քանի որ 1848 թ. պայքարը Ավստրիական կայսրության դեմ գլխավորեց Պիեմոնտի թագավոր Կառլ Ալբերտը, իսկ Չ. Մացցինիի հիմնած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության քաղաքական ծրագիրը նախատեսում էր իտալական պետություններում հաստատել հանրապետական կարգ<sup>6</sup>:

«Համբավաբեր ռուսիոն» և «Մասյաց աղավնին» Եվրոպայում քաղաքական իրավիճակի նոր փոփոխությունը իրավացիորեն կապում են Ղրիմի(Արևելյան) պատերազմի ավարտի հետ: «Համբավաբեր ռուսիոն» պատերազմի արդյունքում 1856 թ. մարտի 18(30)-ին Փարիզում կնքված հաշտության պայմանագիրը համարում է «ըստ երևույթին վերջին զոհը», որը փորձեց հավատարիմ մնալ Եվրոպայում քաղաքական հավասարակշռությունը պահպանելու որդեգրած սկզբունքին: Բայց պայմանագրի կնքումից հետո Օսմանյան կայսրության «դարաւոր լուծի տակ ճնշված ազգերը բողոքեցին նորա դէմ»: Կրկին պայքարի ելան Մոլդովան, Վալախիան, որոնք միացան, «ստացան նոր իրավունքներ», իսկ նրանց «զարգացումն խոստանում է լաւագոյն ապագայ»<sup>7</sup>: Թերթը նկատի ունի Դանուբյան իշխանություններ Մոլդովայի և Վալախիայի անկախության միավորման համար պայքարը և 1859 թ. նրանց միավորումը<sup>8</sup>: Դանուբյան իշխանությունների օրինակից ոգևորված Սերբիան, Չեքոսլովակիան, Բոսնիան, Բուլղարիան պահանջում են «նույնպիսի իրաւունքներ առանձնագոյութեան, և անկախութեան ի մահմեդական լծոյ»<sup>9</sup>: Թուրքական տիրապետության դեմ չեռնոգորցիների պայքարի «դասը իզուր չի կորչի», իսկ հույները, թեև ցանկալի ազատություն ձեռք չբերեցին, բայց «ապացուցեցին ազգի բողոքը ընդդէմ այժմեան կարգին»<sup>10</sup>: Թերթի կարծիքով այս ժողովուրդների պայքարը «մեծամեծ հետևանքներ ունեցան Եվրոպայի ժամանակակից պատմութեան համար»<sup>11</sup>, որոնցից մեկը ավստրիական տիրապետության դեմ իտալական ժողովրդի պայքարն է: «Համբավաբեր ռուսիոյի» դիտարկմամբ՝ 1848-1849 թվականների պայքարի պարտությունից հետո թուլացած Պիեմոնտի թագավորությունը «ըստ երևույթին դեռ երկար ժամանակ պիտի հրաժարվէր Իտալիան ազատագրելու ջանքէն»<sup>12</sup>, եթե չմերձենար Ֆրանսիայի հետ: 1856 թ. Փարիզում Պիեմոնտի

<sup>1</sup> Տէ՛ս նույն տեղում, էջ 119:

<sup>2</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 201; Дебидур А., *Изд. 1871*, հ. 1, էջ 506; «История XIX века», հ. 5, էջ 67:

<sup>3</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ 4, էջ 18:

<sup>4</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 86-152:

<sup>5</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ 4, էջ 18:

<sup>6</sup> Տէ՛ս Ковальская М. И., *Италия в борьбе за национальную независимость и единство. От революции 1831 г. к революции 1848-1849 гг.*, М., 1981.

<sup>7</sup> «Համբավաբեր ռուսիոն», 1862, 1 նոյեմբերի, թիվ 34, էջ 4:

<sup>8</sup> Տէ՛ս «История Румынии», *отв. ред. В. Н. Виноградов*, М., 1971, с. 105-129.

<sup>9</sup> Տէ՛ս «Համբավաբեր ռուսիոն», 1862, 1 նոյեմբերի, թիվ 34, էջ 4:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում, 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

«իւրաքանչէր դեսպանը» եվրոպական պետութիւնների ղեկավարներին ներկայացրեց «Իտալիոյ տառապակրութեան պատկերը Ավստրիոյ լուծի տակ»<sup>1</sup>: Թերթը նկատի ունի Պիեմոնտի վարչապետ կոմս Կամիլո Կավուրին, ով Փարիզում ընթացող բանակցութիւնների ժամանակ եվրոպական պետութիւնների ներկայացուցիչների ուշադրութեանը հրավիրեց իտալական հարցի վրա, բայց աջակցութիւն չստացաւ<sup>2</sup>:

«Չամբավաբեր ռուսիոյի» դիտարկմամբ՝ եվրոպական պետութիւնները չհարգեցին և անտեսեցին Կ. Կավուրի խնդրանքը, իսկ Ավստրիան չհաշտվեց Պիեմոնտի սահմանադրութեան իրողութեան հետ և «մտածեց զինու զօրութեամբ ոչնչացուցանել Նորան»<sup>3</sup>: Այդ նպատակով Ավստրիան 1859 թ. ապրիլի 26-ին վերջնագիր ներկայացրեց Պիեմոնտին և ներխուժեց Նրա տարածքը: Թերթը սխալ է թույլ տալիս ավստրո-իտալական պատերազմի բռնկումը կապելով Պիեմոնտի թագավորութիւնում սահմանադրութեան ընդունման հետ: Չնայած դրան, ուշագրաւ դիտարկում է անում՝ նշելով որ «Իտալիոյ թերակղզին մինչև 1859 թվականն էր միայն աշխարհագրական անուն»<sup>4</sup>: «Չամբավաբեր ռուսիոն» այս հարցում հակադրվում է Ավստրիայի կանցլեր Կլեմենս Մետեռնիխին, ով Յոզեֆ պապի լեգատ Էրկոլե Կոնսալվիին ասել էր. «Իտալական հարց ընդհանրապես գոյութիւն չունի»<sup>5</sup>, իսկ Վիեննայի վեհաժողովում հայտարարել, որ Իտալիան սոսկ «անկախ պետութիւնների համակցութիւն է, միավորված միասնական աշխարհագրական անունով»<sup>6</sup>:

Իտալացիների պայքարի ազատագրական բնույթը ընդգծում է Նան. «Մասյաց աղավնի» ամսագիրը՝ շատ դեպքերում չթաքցնելով համակրանքը ազատատեսչ իտալացիների պայքարի նկատմամբ: Ամսագիրը վերլուծելով 1859 թ. եվրոպայում ստեղծված քաղաքական իրադրութիւնը՝ իրատեսորեն նկատում է, որ իտալական խնդիրը «եվրոպական քաղաքականութեան բոլոր ուրիշ խնդիրները գրեթէ մոռացուց»: «Մասյաց աղավնին» իտալական խնդրի ծագումը նույնպես կապում է 1856 թ. Փարիզի գազաթնաժողովի քննարկումների հետ և նշում, որ եվրոպական պետութիւնների ներկայացուցիչները մտավախութիւն էին հայտնել, թէ Իտալիայի «անհանդարտութեան պատճառով եվրոպայի հանգստութիւնը Նորեն վրդովի»<sup>7</sup>: Թերթը հանգամանորեն անդրադառնում է ֆրանս-իտալական համատեղ պատերազմ սկսելու նախապատմութեանը: 1859 թ. հունվար-փետրվարն պատերազմական նախապատրաստութիւններ էին ընթանում, որի պայմաններում Անգլիան փորձում էր դիվանագիտական ճանապարհով կարգավորել խնդիրը և այդ նպատակով, որպէս միջնորդ, Վիեննա ուղարկեց դեսպան լորդ Զալվիին: Ռուսաստանը 1859 թ. մարտին առաջարկում էր եվրոպական հինգ գլխավոր տերութիւնների ժողով հրավիրել և քննարկել «Նոր ծագած խնդիրները»<sup>8</sup>: «Մասյաց աղավնին» ճիշտ էր տեղեկացված եվրոպական պետութիւնների դիրքորոշման մասին: 1859 թ. Ֆրանսիան առանց Ռուսաստանի հետ հարաբերութիւնները բարելավելու և Նրա չեզոքութիւնը ստանալու պատրաստ չէր միայնակ Ավստրիայի դեմ պատերազմ սկսել<sup>9</sup>: Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանը շահագրգրված էր ոչ միայն Ավստրիայի թուլացման հարցում, այլև ձգտում էր Ապենինյան թերակղզում ունենալ ուժեղ և հզոր դաշնակից<sup>10</sup>: Դա հնարավորութիւն տվեց Ֆրանսիային և Ռուսաստանին մերձենալ և 1859 թ. մարտի 3-ին գաղտնի դաշնագիր կնքել: Ֆրանսիան Ռուսաստանի միջոցով առաջարկեց եվրոպական մեծ տերութիւնների վեհաժողով հրավիրել և քննարկել

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> *Տէ'ի Տկազկին Ս. Դ., Կաւր և վոսսоединение Италии, «Историк-Марксист», М., 1935, № 5-6, с. 88-115; Берти Д., Россия и итальянские государства, с. 560-571; «История XIX века», т. 5, էջ 67:*

<sup>3</sup> «Չամբավաբեր ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> *Յակ Լ., նշվ. աշխ., էջ 158:*

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 160:

<sup>7</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա., էջ 16:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> *Տէ'ի «История дипломатии», էջ 520:*

<sup>10</sup> *Տէ'ի Берти Дж., Россия и итальянские государства в период Рисорджименто. М., 1959, с. 180.*

իտալական հարցը<sup>1</sup>: Ըստ «Մասյաց աղավնու», վեհաժողով հրավիրելու առաջարկությունը, բացի Ավստրիայից, սիրով ընդունեցին բոլոր պետությունները: Ավստրիան պայման դրեց իտալական խնդիրը քննարկել միայն 1818 թ. նոյեմբերի 15-ին կնքված պայմանագրի հիման վրա, իսկ Պիեմոնտի թագավորությանը թույլ տալ մասնակցել միայն իրեն վերաբերող հարցի քննարկմանը: Այս պայմանին համաձայնված չորս պետությունները վեհաժողովի բացման օրը նշանակեցին ապրիլի 30-ին, Պիեմոնտին և Ավստրիային առաջարկեցին իրենց զորքերը սահմանից հետ քաշել ու զինաթափվել: Պիեմոնտը ապրիլի 20-ին ընդունեց այս պայմանը, որից Ավստրիան նույնպես պահանջեց զինաթափվել: «Մասյաց աղավնու» հավաստի տեղեկություններով՝ այս լուրը Թուրին բերող ավստրիական գեներալ Կիուլայի համհարզը հայտնել է, որ ինքը միայն երեք օր կարող է պատասխանի սպասել: Մերժում ստանալով՝ Ավստրիան իր զորքերը շարժեց դեպի Պիեմոնտ: Ձևականորեն հանդես գալով որպես հարձակվող կողմ, Ավստրիան Գերմանական միության սահմանադրության համաձայն զրկվեց ռազմական օգնությունից և ապրիլի 29-ին անցնելով սահմանային Տիչինո գետը պատերազմ սկսեց<sup>2</sup>:

«Մասյաց աղավնու» տեղեկությամբ Անգլիան այս պատերազմում չեզոքություն է պահպանելու, իսկ Պրուսիան «պարսպվել» է Ավստրիային պատերազմ սկսելու համար և հնարավոր հետևանքների պատասխանատվությունը «իր վրայեն մեկդի կձգեր»: Ըստ ամսագրի՝ այսպես սկսվել է ավստրո-իտալական պատերազմը, որը «օրե օր սաստկանալոյ վրայ է»<sup>3</sup>: «Մասյաց աղավնին» իրատեսորեն վերլուծում է պատերազմի մեջ ներթաշված պետությունների հետապնդած նպատակը: Ամսագրի համոզմամբ՝ Պիեմոնտը հոժարությամբ ներթաշվել է պատերազմի մեջ, որը ցանկալի է բոլոր իտալացիներին, քանզի նրանց պայքարի հիմքում ընկած է «ազատասիրական հոգին, որով Իտալիոյ ազատութեանը սրտանց կփափագի»: Պիեմոնտը ձգտում է «օտարազգի լուծեն ազատվեն Իտալիո հյուսիսային նահանգները ու իրեն տերութեան հետ միանան և այնպես Եվրոպայի առաջնակարգ տերութիւններուն կարգը անցնի...»<sup>4</sup>: «Մասյաց աղավնին» ճիշտ է ընկալում ոչ միայն իտալացիների, այլև նաև Նապոլեոն III-ի նպատակը, ով ձգտում էր Ֆրանսիայի ազդեցությունն ուժեղացնել Յուրսիսային Իտալիայում, ընդարձակել կայսրության սահմանները և դրանով ամրապնդել երկրի ներսում իր կառավարության դիրքերը<sup>5</sup>: «Մասյաց աղավնու» կարծիքով, ավստրո-իտալական պատերազմի բռնկմանը մասամբ նպաստեց նաև Պիեմոնտի թագավոր Վիկտոր Էմմանուել II-ի ճառը երկրի խորհրդարանում, որը Իտալիայի բոլոր կողմերում «լսվեց իբրև ավետիս մոտաւոր ազատութեան և այն երկրին բնակչացը վրայ այնպիսի ուրախութիւն ձգեց, որ բերանով պատմելը կարելի չէ»<sup>6</sup>: Ամսագրի հավաստի տվյալներով<sup>7</sup> թագավորի ճառից ոգևորված իտալացիները ֆրանսիական զորքերի հետ 1859 թ. մայիս-հունիսին Մոնթեբելոյի, Պալեստրոյի, Մաջենտայի, Սոլֆերինոյի և Սան Մարտինոյի ճակատամարտերում հաղթանակներ տարան և այդ «տեղերուն անունները անմահացուցին պատմութեան մէջ»<sup>8</sup>:

«Համբավաբեր ռուսիոն» իրավացիորեն գրում է, որ ինչպիսի արագությամբ ավստրիական զորքը մտավ Պիեմոնտի տարածք, նույնքան արագ Ֆրանսիան օգնության հասավ իտալացիներին և համատեղ ուժերով երկու արյունահեղ ճակատամարտում ավստրիացիներին հաղթեցին ու ստիպեցին նահանջել Մինչիո գետի հակառակ ափը<sup>9</sup>: Հավաստի

<sup>1</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 220-221; Дебидур А., *Изд. шп.*, т. 2, էջ 163:

<sup>2</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 220; «История дипломатии», էջ 520:

<sup>3</sup> «Համբավաբեր ռուսիոն», 1860, հունվար, թիվ Ա, էջ 17:

<sup>4</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 18:

<sup>5</sup> Տե՛ս «История Франции», отв. ред. А. З. Манфред, т. 2, М., 1973, с. 351; Дебидур А., *Изд. шп.*, т. 2, էջ 155:

<sup>6</sup> «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:

<sup>7</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 222:

<sup>8</sup> «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

<sup>9</sup> Տե՛ս «Համբավաբեր ռուսիոն», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

տվյալներ ներկայացնելով ավստրիացիների կորուստների, ինչպես նաև Լոմբարդիան ամբողջությամբ ազատագրելու մասին<sup>1</sup>, «Մասյաց աղավնին» գրում է, որ եթե ֆրանս - իտալական զորքը շարունակեր իր հաղթարշավը, ապա հեշտությամբ նաև Վենետիկ կմտներ: Բայց «Իտալական պատերազմը, որ այնչափ փառալուրդաբան սկսեր էր, անակնկալ կերպով մը վերջացավ՝ առանց Իտալիոյ ազատութեան խնդիրը որոշելու»<sup>2</sup>:

Ըստ «Համբավաբեր ռուսիոյի»՝ մինչև Եվրոպայում սպասում էին դաշնակիցների հաղթանակին՝ Նապոլեոն III-ը անսպասելի հաշտություն կնքեց, որով Պիեմոնտը ստացավ միայն Լոմբարդիան<sup>3</sup>: «Մասյաց աղավնու» հավաստի տեղեկությամբ<sup>4</sup> 1859 թ. հուլիսի 8-ին Վիլլաֆրանկա քաղաքում Ֆրանսիայի և Ավստրիայի կայսրերը նախ՝ զինադադար, ապա նաև հաշտություն կնքեցին: Պայմանավորվածության համաձայն Լոմբարդիան մնում էր Պիեմոնտին, Վենետիկի գավառը՝ Ավստրիային, իսկ իտալական մյուս պետությունները պետք է կազմեին դաշնություն՝ Գերմանական դաշնության նման: Այս հաշտությունից իտալացիները գոհ չէղան, իսկ «բոլոր Եւրոպա զարմացավ, վասնզի Իտալական պատերազմը իւր նպատակին չհասածի պես էր»<sup>5</sup>: Ընդհանուր առմամբ ճիշտ ներկայացնելով հաշտության պայմանները՝ «Մասյաց աղավնին» փոքր անճշտություն է տալիս: Իրականում հուլիսի 8-ին Ֆրանսիայի և Ավստրիայի կայսրերը պայմանավորվեցին դադարեցնել կրակը, իսկ հուլիսի 11-ին համաձայնեցրին պայմանագրի պայմանները, որը օգոստոսի 11-ին վավերացրեցին Ցյուրիխում: Պայմանագրով Ավստրիան Լոմբարդիան զիջում էր Նապոլեոն III-ին, ով այն իր հերթին «նվիրում էր» Պիեմոնտին: Վենետիկը մնում էր Ավստրիային, իսկ Տոսկանայի և Մոդենայի դուքսերը վերահաստատվում էին իրենց գահերին: Երկու կայսրերը պարտավորվում էին նպաստել Իտալական համադաշնության ստեղծմանը Հռոմի պապի գլխավորությամբ: Վիկտոր Էմմանուել II-ը համաձայնվեց այս պայմանների հետ, իսկ վարչապետ Կ. Կավուրը, որպես բողոքի նշան, հրաժարական տվեց<sup>6</sup>:

«Համբավաբեր ռուսիոյի» կարծիքով, թեպետ Վիլլաֆրանկայի պայմանագրով նախատեսվում էր Հռոմի պապի գլխավորությամբ իտալական դաշնակցություն ստեղծել, բայց դա «անկատարելի միտք էր, զոր Իտալիոյ ժողովուրդքը իհարկե չէին կարող ընդունել»<sup>7</sup>: Դա էր պատճառը, որ Ռոմանիան և Մարկեն հետևեցին մյուս դքսությունների օրինակին և հայտարարեցին Պիեմոնտի հետ միավորվելու մասին: Այս պարագայում «Եվրոպային մնաց միայն ճանաչել եղելութիւնը»<sup>8</sup>: «Մասյաց աղավնին» ճիշտ տեղեկություն է տալիս Կ. Կավուրի հրաժարականի<sup>9</sup>, Մոդենայի և Պարմայի դքսություններում իրենց նախկին կառավարիչներին չճանաչելու, Հռոմի պապի ենթակայությունից Ռոմանիայի դուքս գալու և Պիեմոնտի թագավորության հետ միավորվելու մասին: Ըստ ամսագրի, Վիկտոր Էմմանուել II-ը այս դքսությունների ասամբլեաների պատգամավորներին տեղեկացրել է, որ միավորում տեղի կունենա, եթե Եվրոպական գլխավոր տերությունները դրան հավանություն տան: Թագավորին հայտնի է, որ Ավստրիան այդ միավորմանը դեմ է, իսկ Նապոլեոն III-ը «Աւստրիոյ իրաւունք կուզէ տալ»<sup>10</sup>: «Մասյաց աղավնին» իրավացի է. Վիկտոր Էմմանուել II-ը դքսություններ

<sup>1</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 222:

<sup>2</sup> «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

<sup>3</sup> Տէ՛ս «Համբավաբեր ռուսիոյ», 1862, 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4:

<sup>4</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 223; Дебидур А., նշվ. աշխ., հ. 2, էջ 173-175:

<sup>5</sup> «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

<sup>6</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 223; Дебидур А., նշվ. աշխ., հ. 2, էջ 173-175; «История XIX века», հ. 5, էջ 276:

<sup>7</sup> «Համբավաբեր ռուսիոյ», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 3, էջ 4:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 223-224; Дебидур А., նշվ. աշխ., հ. 2, էջ 174:

<sup>10</sup> «Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:

րի միավորման հարցով դիմեց Նապոլեոն III-ին, ով Փարիզում նրա ներկայացուցիչ Ֆ. Արեզեին հայտնեց, որ դեմ է դքսությունները Պիեմոնտի հետ միավորելուն<sup>1</sup>: Նապոլեոն III-ի անսպասելի մերժումը իտալական բոլոր պետություններում առաջ բերեց բուռն ցասում և համատարած դժգոհություն:

1859 թ. հոկտեմբերին Կենտրոնական Իտալիա եկած իտալական ազգային-ազատագրական պայքարի երևելի դեմքեր Ջուզեպպե Մացցինին և Ջուզեպպե Գարիբալդին բուռն գործունեություն ծավալեցին հայրենասիրական ուժերին ոտքի հանելու համար: 1859 թ. սեպտեմբերի 2-ին Ջ. Մացցինին Պիեմոնտի թագավորին հղած նամակում առաջարկեց գլխավորել ազգային պայքարը և արշավանք սկսել Զարավալին Իտալիան, Պապական պետությունը ու Կենտրոնական ազատագրելու նպատակով: 1859 թ. սեպտեմբերի 2-ին Ջ. Գարիբալդին հանգանակություն սկսեց «Միլիոն հրացան» ձեռք բերելու համար, որը մեծ հաջողություն ունեցավ<sup>2</sup>: Այս մասին իրագրեց «Մասյաց աղավնին» բավական հավաստի տվյալներով ներկայացնում է Ջ. Գարիբալդու կենսագրությունը, տպագրում նրա գծանկարը, ջերմ խոսքեր նվիրում իտալական ազատագրական պայքարի հերոսին, ով «բոլոր աշխարհիս հետ ուշադրութիւնը սրած՝ կեցած է այժմ Իտալիոյ բաղդին վճիռը լսելու»<sup>3</sup>:

Իտալական դքսություններ Տոսկանան, Պարման, Մոդենան և Ռոմանիան 1860 թ. մարտին անցկացված հանրաքվեում որոշեցին միանալ Պիեմոնտին<sup>4</sup>: Այս մասին քաջատեղյակ «Մասյաց աղավնին» գրում է, որ այդ կապակցությամբ իտալացիները ներկայումս «ուրախութեան մեծամեծ հանդեսներ կկատարեն»: Այդ իրադարձությունները համարելով «այժմու բաղաբական գլխավոր խնդիրներեն մեկը»՝ «Մասյաց աղավնին» կարծիք է հայտնում, որ Կենտրոնական Իտալիայի միավորումը Պիեմոնտի հետ «թեպետ շատ դիւրին կերպով եղաւ լընցավ», բայց իտալական ժողովրդի փափագը չկատարվեց: Ապենինյան թերակղզում առաջվա պես անհանգիստ վիճակ է: Իտալիայի հյուսիսը և հարավը «սոսկալի ալեկոծութեան մեջ կտազնապին», իսկ Սիցիլիայի բնակիչները երկու-երեք անգամ ապստամբել են, նվաճվել, բայց «դարձեալ հանդարտած չեն»<sup>5</sup>: Գիշտ ներկայացնելով իտալական պետություններում առկա բաղաբական վիճակը՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ 1860 թ. գարնանը Իտալիան կրկին հայտնվեց «ալեկոծութեան մեջ»: Դրա պատճառը ամսագիրը իրավացիորեն համարում է Սիցիլիայում 1860 թ. ապրիլի 4-ին բռնկված ապստամբությունը և երեք շաբաթ անց դրան հաջորդած Ջ. Գարիբալդու սիցիլիական արշավանքը, որը գնալով մեծացավ և «Երոպայի նշանաւոր բաղաբական դիպուածներուն կարգը անցաւ»<sup>6</sup>: Ըստ «Համբավաբեր ռուսիոյի», սիցիլիացիները միշտ դժգոհ էին Նեապոլի թագավորի կառավարումից, նրա դեմ բազմիցս ընդվզում էին, «բայց դժգոհ եղողների անկարգ ամբոխքն ամենայն տեղ յաղթահարում էին: Չենովայից անսպասելիորեն Սիցիլիա արշաված Պիեմոնտի զորապետ Ջ. Գարիբալդին, ով «հռչակուած էր իւր քաջագործութեամբքն» ինչպես 1848-1849 թթ., այնպես էլ 1859 թ. պատերազմում, իր հազար կամավորներով մեկ ամսում ազատագրեց Սիցիլիան: Նա ամեն տեղ պարտության մատնեց Ֆրանցիսկ II թագավորի գերակշռող զորքին և հարկադրեց նրան «ամոթալի դաշնագրութիւն» կնքել: Դրանից հետո Սիցիլիան հայտարարեց, որ «միաւորուած է իտալական թագաւորութեան հետ Վիկտոր Էմմանուէլի գայիսոնի տակ»<sup>8</sup>:

<sup>1</sup> *Տէ՛ս Դեբիճըր Ա., նշվ. աշխ., հ. 2, էջ 176; “История Италии”, հ. 2, էջ 224; “История XIX века”, հ. 5, էջ 276:*

<sup>2</sup> *Տէ՛ս “История Италии”, հ. 2, էջ 224-225:*

<sup>3</sup> *«Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ 9, էջ 51-52:*

<sup>4</sup> *Տէ՛ս Դեբիճըր Ա., նշվ. աշխ., հ. 2, էջ 182; “История Италии”, հ. 2, էջ 228:*

<sup>5</sup> *«Մասյաց աղավնի», 1860, մայիս, թիվ Ե, էջ 87:*

<sup>6</sup> *Տէ՛ս “История Италии”, հ. 2, էջ 226; “История XIX века”, հ. 5, էջ 278-279:*

<sup>7</sup> *«Մասյաց աղավնի», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:*

<sup>8</sup> *«Համբավաբեր ռուսիոյ», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:*

Իտալական ազատագրական պայքարին ուշադրությամբ հետևող «Մասյաց աղավսին» նկատում է, որ 1848 թ. սկսած «Իտալիոյ ազատութեան սիրովը վառուած Կարիպալտի զորավարը» սիցիլիական արշավանքի ժամանակ իր հայրենակիցներին հորդորում է Պիեմոնտի «թագավորին հետ միաբանին»: Անգամ «բոլոր Իտալիան մեկ հասարակապետութիւն դարձնելու» գաղափարի ջատագով Չ. Մացցինին ներկայումս «զամենքը կյորդորե ոտք ելլելու՝ Փիեմոնթին հետ միանալու մտքով»<sup>1</sup>: «Մասյաց աղավսին» այս հարցում նույնպես ճիշտ էր տեղեկացված, որովհետև Չ. Գարիբալդու սիցիլիական արշավանքն ընթացավ «Իտալիա և Վիկտոր Էմմանուէլ» կարգախոսով, որին համամիտ էր նաև Չ. Մացցինին<sup>2</sup>: Չանդրադառնալով արշավանքի մանրամասներին՝ «Մասյաց աղավսին» ընդգծում է, որ Չ. Գարիբալդու ունեցած հաջողությունից ամբողջ «Իտալիան անպատմելի ցնծութեան ու շարժման մէջ է»: Իտալացիների պայքարը գրավել է եվրոպական պետությունների ուշադրությունը, ֆրանսիացիները նրանց համար գումար են հավաքում, իսկ անգլիացիներն իրենց օգնությունն են առաջարկում օգնական զորք ուղարկելու համար: «Մասյաց աղավսին» չի հավատում անգլիացիների անկեղծությանը՝ գտնելով, որ նրանք «առանց իրենց շահը մտածելու չեն աշխատիր այս բանիս մէջ»<sup>3</sup>: Վերլուծելով Չ. Գարիբալդու արշավանքի հետևանքով իտալական պետություններում ստեղծված քաղաքական վիճակը՝ ամսագիրը ցավով արձանագրում է, որ պատերազմի որոտներն ու կայծակները գոռում են այդ գեղեցիկ երկրի երկնքում, իսկ «նորա որդիքը իրենց արեամբ կոռոզեն Իտալիոյ դաշտերը»<sup>4</sup>:

«Մասյաց աղավսին» տեղեկություններ է տալիս, որ «բաջն Կարիպալտին» սակավաթիվ զորքով, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով 1860 թ. սեպտեմբերի 7-ին փառավորությամբ մտավ Նեապոլ, որտեղ ժողովուրդն անպատմելի ցնծության հանդեսներ կազմակերպեց: Չ. Գարիբալդին չբավարարվեց Սիցիլիան ազատագրելով, անցավ Կալաբրիա և «նույնպիսի արագութեամբ ցիրուցան անելով ամեն տեղ» Ֆրանցիսկ II-ի զորքը, հայտնվեց Նեապոլում<sup>5</sup>: «Մասյաց աղավսին» և «Համբավաբեր ռուսին» հավաստի տեղեկություններ են տալիս Չ. Գարիբալդու սիցիլիական արշավանքի, Նեապոլը գրավելու և քաղաքի բնակիչների կողմից խանդավառ ընդունելության արժանանալու մասին<sup>6</sup>: «Մասյաց աղավսին» Չ. Գարիբալդուն անվանում է Իտալիայի «հրաշալի ազատարար», ով մտադիր է իրականություն դարձնել բոլոր իտալացիների ցանկությունը և ազատագրել նաև Հռոմն ու Վենետիկը: Միայն դրանից հետո, եզրակացնում է ամսագիրը, «այսքան ժամանակէ ի վեր փափաքելի եղած Իտալիոյ միութիւնն ու կատարեալ ազատութիւնը վերջապես կտեսնուի»<sup>7</sup>: Ամսագիրը իրատեսորեն վերլուծում է Նեապոլի ազատագրումից հետո ստեղծված վիճակը և հանգում այն եզրակացության, որ պայքարի հետագա մարտավարության հարցում տարածայնություններ առաջացան Չ. Գարիբալդու և Պիեմոնտի թագավորի միջև: Ամսագիրը կռահում է Չ. Գարիբալդու ցանկությունը<sup>8</sup>, ով մտադիր էր առանց Ֆրանսիայի օգնության ազատագրել ամբողջ Իտալիան և երկրի կառավարումը հանձնել թագավորին, իսկ Վիկտոր Էմմանուէլ II-ը «կփութար օր մը առաջ իւր ձեռքն առնելու Կարիպալտին սկսած ար-

<sup>1</sup> «Մասյաց աղավսին», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:

<sup>2</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 228:

<sup>3</sup> «Մասյաց աղավսին», 1860, հունիս, թիվ 2, էջ 103:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Տէ՛ս «Համբավաբեր ռուսին», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

<sup>6</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 228-235; «История XIX века», հ. 5, էջ 282:

<sup>7</sup> «Մասյաց աղավսին», 1860, հոկտեմբեր, թիվ ԺԱ, էջ 163:

<sup>8</sup> Տէ՛ս «История Италии», հ. 2, էջ 232-237:

շավանքին պտուղները, Գաղիոյի օգնութեամբը, հաւանութեամբն ու պաշտպանութեամբը»<sup>1</sup>: «Մասյաց աղավնին» հասկանում էր նաև Վիկտոր Էմմանուէլ II-ի և Կ. Կաթողի մտադրութիւնը, ովքեր Չ. Գարիբալդին նախաձեռնութիւնից զրկելու նպատակով առաջնորդվում էին Նապոլեոն III-ի «Fate presto» (Գործեք արագ) հորդորով<sup>2</sup>:

«Մասյաց աղավնին» նկատում է, որ Պիեմոնտի թագավորն ի վերջո «միաբանեցաւ Կարիպալտեանց հետ, և Իտալական յեղափոխութեան ամեն գլխաւոր թելերը ձեռք առաւ» ու իր զորքով Նոյեմբերի 7-ին մտավ Նեապոլ: Ամսագիրն արդարացնում է Վիկտոր Էմմանուէլի քաղաքականութիւնը՝ գտնելով, որ ստեղծված իրադրութիւնում նա երկու ճանապարհ ունէր. «կամ ազգային շարժման դէմ պիտի կենար, եւ անով բոլոր Իտալիան իրեն դէմ պիտի հաներ, եւ կամ ազգին գլուխ պիտի անցներ, ու պիտի առաջնորդեր անոր մեծ նպատակին հասնելու, որ էր Իտալիոյ միութիւնը»<sup>3</sup>: «Համբավաբեր ռուսիոն» փաստում է, որ Նեապոլի բնակչութիւնը հանրաբովանակեց անցկացնելով որոշեց միավորել Իտալական սոր թագավորութիւնը: Թերթը դա գնահատում է «համաշխարհական պատմութեան մէջ չեղած անցքեր», որը եվրոպական պետութիւնները «ճանաչեցան իբրև կատարուած գործքեր»<sup>4</sup>:

Իտալիայի միավորումը իրավացիորեն համարելով ազգային մեծ նպատակ՝ «Մասյաց աղավնին» վկայակոչում է 1861 թ. հունվարին կրկին Պիեմոնտի վարչապետի պաշտոնը ստանձնած կոմս Կ. Կաթողի ճառից հետևյալ խոսքերը. «Մեր քանքն ու աշխատութիւնը այս է որ Հռոմը մայրաքաղաք ընենք Իտալիոյ թագավորութեանը»<sup>5</sup>: Ամսագիրը հղում է անում նաև Չ. Գարիբալդին, ով հայտարարել էր. «Վիկտոր Էմմանուէլ թագաւորը ամենահարկաւոր է Իտալիոյ համար, ով որ Իտալիոյ միութիւնը կուզէ՝ պետք է սորա ետեւէն երթայ»<sup>6</sup>: Այս հայտարարութիւններից ամսագիրը եզրակացնում է, որ Չ. Գարիբալդին և Վիկտոր Էմմանուէլը բնավ մտադրութիւն չունեն զենքը ցած դնել, մինչև չազատագրեն Հռոմը և Վենետիկը: «Մասյաց աղավնու» կարծիքով ավելի հեշտ կլինի լուծել Հռոմի խնդիրը, քան թէ Վենետիկի, որը Ավստրիան հեշտութեամբ չի զիջի և այնպես է ամրացրել ու զորքով լցրել, «կարծես թէ իրեն տերութեանը վերջին ապաստարանն է»<sup>7</sup>:

«Մասյաց աղավնին» համոզված էր, որ Իտալիայի ազգային խնդիրը չի կարող հաջողութիւն ունենալ առանց մեծամեծ դժվարութիւնների հաղթահարելու և զանազան փորձութիւններ անցնելու: Բացի Վենետիկի ու Հռոմի դժվարագոյն խնդիրը լուծելու, իտալացիները չեն կարողացել երկրի բաժանված մասերը միավորել և «մեկ ամբողջ մարմին մը կազմել, թէպէտ եւ բոլոր ազգին ալ ընդհանրապէս խելքը միտքը Իտալիոյ միութեանը ետեւէ է»<sup>8</sup>: Այդ ճանապարհի կարևոր քայլերից մեկը «Մասյաց աղավնին» համարում է 1861 թ. փետրվարի 13-ին Գաետա ամրոցի անձնատուր լինելը, որով Նեապոլի թագավորութիւնը դադարեց գոյութիւն ունենալուց և միավորվեց Պիեմոնտին<sup>9</sup>: Ամսագիրը Պապական պետութեան վիճակը համեմատում է Գաետա ամրոցի պաշարման հետ և «շատ հավանական» համարում, որ մոտ ժամանակներս Հռոմը Գաետայի պէս նվաճվի և «Իտալիոյ միութիւնը ամբողջանայ»<sup>10</sup>: 1859 թ. Ավստրիայի դէմ մղած պատերազմի ամենից «գեղեցիկ պտուղը» ամսագիրը համարում է «Իտալիոյ ազատիլը՝ զօրանալը եւ միանալը» Պիեմոնտի «հայրենա-

<sup>1</sup> «Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբեր, թիվ ԺԱ, էջ 163:

<sup>2</sup> Տէ՛ս «История Италии», т. 2, էջ 232-237; «История XIX века», т. 5, էջ 283; Дебидур А., *նշվ. աշխ.*, т. 2, էջ 196:

<sup>3</sup> «Մասյաց աղավնի», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ 184:

<sup>4</sup> «Համբավաբեր ռուսիոն», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

<sup>5</sup> «Մասյաց աղավնի», 1860, նոյեմբեր, թիվ ԺԱ, էջ 184:

<sup>6</sup> Նոյն տեղում, 1861, 15 հունիսի, թիվ Բ, էջ 22:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 23:

<sup>8</sup> Նոյն տեղում, 1861, 1 փետրվարի, թիվ Գ, էջ 58:

<sup>9</sup> Տէ՛ս նոյն տեղում, 1861, 1 մարտի, թիվ Ե, էջ 58:

<sup>10</sup> Նոյն տեղում, 1861, 1 ապրիլի, թիվ Ե, էջ 85:

սեր թագավորին»: Փաստելով, որ 1861 թ. հունվարի 27-ին ձևավորված իտալական խորհրդարանը մարտի 17-ին Վիկտոր Էմմանուել II-ին ընտրել է Իտալիայի թագավոր<sup>1</sup>, «Մասյաց աղավնին» համոզմունք է հայտնում իտալական թագավորության հետագա հզորացման կապակցությամբ: «Տարակոյս չկա, – գրում է ամսագիրը, – որ Իտալիոյ նոր թագաւորութիւնը հետզհետէ աւելի ալ զօրանայ եւ բոլորովին միանայ՝ յաղթանկելով Աւստրիոյ տերութեան եւ Ռոմվայ պապին ըրած յամառութեանցը վրայ: Չայս կյուսան իտալացիք, եւ այսմ կփափագին ամենայն ազատասերք»<sup>2</sup>: Անդրադառնալով Ռոմի պապի բռնած դիրքին՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ դատելով Պիոս IX պապի՝ վերջերս կարդինալների առաջ արտասանած ճառից, նա ոչ միայն չի պատրաստվում հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից, այլև՝ իր իշխանության դեմ դուրս եկած յուրաքանչյուրի քայլը որակում է «մեծ յանդգնութիւն եւ մահու չափ մեղք»<sup>3</sup>:

«Յամբավաբեր ռուսիոն» նույնպես ընդգծում է Իտալիայի միավորման հարցում Ռոմի պապի խոչընդոտելը: Ըստ թերթի՝ Ռոմի պապն այնտեղ «յամառութեամբ պահպանում է իւր աշխարհական իշխանութիւնը, երբ որ բոլոր Իտալիան պահանջում էր այդ քաղաքը, որպէս իւր բնիկ և պատմական մայրաքաղաք»<sup>4</sup>: «Յամբավաբեր ռուսիոյի» դիտարկմամբ՝ Պիոս IX պապը Ռոմը համարում է Ս. Պետրոսի ժառանգություն և չի պատրաստվում դրանից հրաժարվել, իսկ Ֆրանսիան չի հանում 1849 թվականից Ռոմում գտնվող իր բերդապահ զորքը: Այս պայմաններում հայտնի չէ, թե ինչով է ավարտվելու «այդ տարօրինակ դրութիւնը»<sup>5</sup>:

«Մասյաց աղավնին» և «Յամբավաբեր ռուսիոն» ճիշտ են ներկայացնում Ռոմի պապի դիրքորոշումը, ով աշխարհիկ իշխանությունից հրաժարվելու և Ռոմը զիջելու պահանջի կապակցությամբ հայտարարել էր՝ «non possumus» («չենք կարող»<sup>6</sup>): «Մասյաց աղավնին» իտալական ազատագրական պայքարը լուսաբանելիս բազմիցս ընդգծում է, որ Իտալիան միավորված տեսնելը ոչ միայն իտալական ժողովրդի բաղձանքն է, այլև Պիեմոնտի թագավորության ցանկությունը: Այդ միավորումը ամբողջական չի լինի առանց Ռոմի և Վենետիկի: Մինչ Ռոմի պապը համառում է և չի ցանկանում հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից, գրում է «Մասյաց աղավնին», Իտալիայի խորհրդարանում անդադար զորավոր ձայներ են հնչում Ռոմը Իտալիայի մայրաքաղաք հռչակելու և ֆրանսիական կայսրին այնտեղից դուրս բերելու մասին: Ի պատասխան պատգամավորների այս պահանջի՝ կոմս Կ. Կավուրը նրանց կրթերը հանդարտացրել է՝ հայտարարելով. «Կերթամք մեք Ռոմ, անտարակոյս, բայց Գաղղիոյ հաւանութիւնն ընդունելէն ետեւ»<sup>7</sup>: Ամսագրին հայտնի չէր, թե ի՞նչ դիրքորոշում կգրավի Ֆրանսիան այս հարցում, բայց գիտեր իտալացիների մտադրությունը: Նրանք մտքներին հաստատ դրել են, գրում է ամսագիրը, ֆրանսիական զորքը դուրս բերել Ռոմից, որը «բոլոր Իտալիոյ մայրաքաղաքը պիտի դառնայ»<sup>8</sup>: Ստեղծված իրադրությունում ամսագրին մտահոգում էր, թե արդյո՞ք Ջ. Գարիբալդին Վենետիկն ու Ռոմը ազատագրելու համար պատերազմ կսկսի, մանավանդ որ իտալացիները պատրաստ են «իրենց դյուցազուն» Ջ. Գարիբալդու «մեկ խոսքով նորա ետևէն ամեն տեղ երթալու»: Բայց, ինչպես երևում է, շարունակում է դատողություն անել ամսագիրը, Պիեմոնտի կառավարության կարծիքն այն է, որ «դեռ պատերազմը սկսելու ժամանակը չէ»<sup>9</sup>:

<sup>1</sup> Ст'и "История Италии", т. 2, с. 237; Канделоро Дж., ит. яз., с. 153-157; "История XIX века", т. 5, с. 286:

<sup>2</sup> «Մասյաց աղավնի», 1861, 1 մարտի, թիվ Ե, էջ 119:

<sup>3</sup> Նույն տեղում, 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:

<sup>4</sup> «Յամբավաբեր ռուսիոն», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 44:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Дебидур А., ит. яз., т. 2, с. 203:

<sup>7</sup> «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում:

Ամսագրի կարծիքով, հակառակ Ջ. Գարիբալդու կողմնակիցների սպասումների, Իտալական թագավորության հետ Չոմոնի և Վենետիկի միավորվելու խնդիրը 1861 թ. ամռանը դադարել է հրատապ լինելուց, հետևյալ պատճառով: Նախ, Անգլիայի վարչապետ լորդ Պալմերսթոնը հայտարարել է, որ Եվրոպայում բազմաթիվ խնդիրներ կան, որոնց լուծումը տեղի չի ունենա առանց պատերազմի և արյուն թափելու: Մյուս կողմից, Իտալիայի խորհրդարանը պատերազմ սկսելու հորդորները ընդունելի չի համարում, ուստի Ջ. Գարիբալդին քաշվել է Կապրերա կղզի և սպասում է, որ «Իտալիան իրեն օգնութեանը կարօտութիւնը ցուցնէ»<sup>1</sup>: Իրականում Անգլիան իտալական հարցում ոչ այնքան խուսափում էր նոր պատերազմից և ձգտում էր խնդիրը խաղաղությամբ լուծել, որքան չէր ցանկանում Ապենինյան թերակղզում տեսնել միավորված ուժեղ իտալական թագավորություն<sup>2</sup>: Անգլիան միաժամանակ անհանգստանում էր, որ Իտալիային աջակցելով Ֆրանսիան կարող է ձեռք բերել Ջենովան կամ Սարդինիա կղզին<sup>3</sup>: Ջ. Գարիբալդու հարցում «Մասյաց աղավնու» դիտարկումը ճիշտ էր, որովհետև 1861 թ. ապրիլին նա պատերազմ սկսելու նպատակով Իտալիայի խորհրդարանում Հարավային բանակը վերակառուցելու նախագիծ ներկայացրեց, որը մերժվեց<sup>4</sup>:

1859-1860 թթ. պատերազմի արդյունքում Լոմբարդիան, Վենետրոնական Իտալիայի դքսությունները և Նեապոլիտանական թագավորությունը Պիեմոնտի հետ միավորվելը ռուսահայ պարբերականները համարում էին Ջ. Գարիբալդու, Կ. Կավուրի և Վիկտոր Էմմանուել II ջանքերի արդյունքը: «Մասյաց աղավնին» Ջ. Գարիբալդուն բնութագրում է որպես Իտալիայի «հրաշալի ազատարար», «հայրենիքի սիրով վառված», «ոյուցազն» և քաջ զորապետ, ով միշտ աներկյուղ մարտի է բռնվում թշնամու դեմ և «այնչափ քաջութիւն և հնարագիտութիւն» ցուցաբերելով հաղթանակներ տանում: Ժողովրդի շրջանում «անխոցելի» գորավարի համբավ ձեռք բերած Ջ. Գարիբալդին ամսագրի դիտարկմամբ «զարմանալի ազդեցութիւն ունի զորաց վրա», ում կյանքի նպատակը Իտալիայի «միությունն ու կատարեալ ազատութիւնը տեսնելն է»<sup>5</sup>: «Համբավաբեր ռուսիոն» Ջ. Գարիբալդուն անվանում է «Իտալիոյ դիւցազն», ով մտքում դրել է «կատարել մեծ գործ», հայրենիքն ազատագրել ավստրիական լծից և Չոմոն ու Վենետիկը միավորել Իտալական թագավորությունը: Թերթը բազմիցս ընդգծում է Ջ. Գարիբալդու սիրված լինելը ժողովրդի շրջանում և նրա հանրաճանաչությունը ոչ միայն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, որի վերաբերյալ բերում է մի շարք հավաստի փաստեր<sup>6</sup>:

1858-1864 թթ. Մոսկվայում Ստեփանոս Նազարյանի խմբագրությամբ լույս տեսած «Հյուսիսափայլ» ամսագիրը նոր երևույթ էր ժամանակի հայ իրականության մեջ: Ստ. Նազարյանցը նպատակ էր հետապնդում հայությանը հաղորդակից դարձնել եվրոպական քաղաքակրթության, լուսավորության, ժամանակակից ռուսական մտքի, քաղաքականության և կրթության հետ<sup>7</sup>: Նա արևելահայ ազատական հոսանքի այն գաղափարախոսներից էր, ով հանդես էր գալիս «խավարի բաբելոնյան գերությունից» ազատագրման, բայց հեռու էր մտում ազգային պահանջների քաղաքական որևէ ձևակերպումից<sup>8</sup>: Ստ. Նազարյանցը իտալական ազգային, ազատագրական պայքարի ընթացքը չի լուսաբանում գերադասելով անդրադառնալ Իտալիային առնչվող այլ թեմաների: Նա ֆրանսերենից թարգմանաբար տպագրում է «Կաթոլիկական բարեփոխման առաջադիմությունը Իտալիայում» ծավալուն

<sup>1</sup> «Մասյաց աղավնի», 1861, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 144:

<sup>2</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 238; «История XIX века», т. 5, էջ 285:

<sup>3</sup> Տե՛ս Дебидур А., նշվ. աշխ., т. 2, էջ 190:

<sup>4</sup> Տե՛ս Канделоро Дж., նշվ. աշխ., էջ 163-166:

<sup>5</sup> «Մասյաց աղավնի», 1860, մարտ, թիվ Գ, էջ 51-52; հունիս, թիվ Զ, էջ 103, 160; հոկտեմբեր, թիվ Ժ, էջ 165:

<sup>6</sup> Տե՛ս «Համբավաբեր ռուսիոն», 1861, 20 օգոստոսի, թիվ 2, էջ 44; 20 դեկտեմբերի, թիվ 10, էջ 4; 1862, 10 հունվարի, թիվ 11, էջ 4; 20 մայիսի, թիվ 20, էջ 4; 1 դեկտեմբերի, թիվ 37, էջ 4; 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

<sup>7</sup> Տե՛ս Մխիթարյան Ս., Հյուսիսափայլ ամսագիրը, Ե., 1958, էջ 232:

<sup>8</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ա. Գ., 19-րդ դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, «Պատմաբանասիրական հանդես», 1966, № 1, էջ 42:

հողվածը<sup>1</sup> և Ադոլֆ Շտաարի՝ 1861 թ. Իտալիա կատարած ճամփորդական օրագիրը՝ «Հայացք դեպի ազատ Իտալիա» վերանագրով: Գերմանացի ճանապարհորդը գրում է, որ իտալացիներին ու նրանց թագավորը իրենց երկիրն անվանում են «իմ ազատ Իտալիա» և պատրաստ են ազգովի Ավստրիայի դեմ պատերազմը շարունակել: Նա պատմում է, որ գեներալ Չ. Գարիբալդին «ժողովրդի ոգևորությունը չսառեցնելու համար յետ չէ դարձնում ոչ ոք, ով որ յայտնում էր իւր յօժարությունը պատերազմելու»<sup>2</sup>: Ստ. Նազարյանը «Современник» ամսագրից թարգմանաբար տպագրում է «Գարիբալդու կյանքը» բավական ծավալուն նյութը<sup>3</sup>, որը «շատ մեծ հաճություն» էր պատճառել բանաստեղծ և հասարակական գործիչ Ռուբեն Չասան-Չալայանին: Նա խնդրել էր Չ. Գարիբալդուն նվիրված պատմությունը թարգմանել հայերեն, որպեսզի «մեր սիրելի հայերից շատերը կարդան մի այսպիսի երևելի մարդու վարքագրությունը հայերեն խոսքով»<sup>4</sup>: Չ. Գարիբալդուն նվիրված պատմությունը բավական հավաստի ներկայացնում է նրա կյանքն ու ազատության համար մղած պայքարը, գովաբանվում է նրա քաջությունը, հերոսությունը, «գերբնական մարդ» լինելը: Հողվածագիրը շեշտելով, որ Չ. Գարիբալդին «հրաշալի կախարհող զօրութիւն ունեցել է բոլոր Իտալիայի մէջ»՝ կանխատեսում է, որ նա «կլինի սիւրբ քաջազնական երգերի, ազգային տաղերի, քաջագործական գրոյցների և չափազանց հրաշապատում աւանդութիւնների»<sup>5</sup>:

Չ. Գարիբալդու նպատակասլածությունը և ազգասիրությունը կարևորում է Պետերբուրգում լույս տեսած արևելահայ ազատական հոսանքը ներկայացնող «Հյուսիս» շաբաթաթերթը: Թերթի հրատարակության ժամանակաշրջանում (1863 թ. սեպտեմբեր - 1864 թ. նոյեմբեր) Իտալիայի միավորումը հիմնականում ավարտվել էր, չլուծված էր մնում Հռոմի և Վենետիկի հարցը: Այդ իսկ պատճառով «Հյուսիսը» անմիջականորեն չի անդրադառնում Իտալիայի միավորման խնդրին, բայց կարևորել է իտալական ազատագրական պայքարում Չ. Գարիբալդու անձնական ներդրումը: Թերթի խմբագիր Ռափայել Պատկանյանը գրում է, որ ինչպես շատերը, այնպես էլ Չ. Գարիբալդին, երկար ժամանակ ապրում էր իր անձի համար, ուներ իր նպատակը և այդ նպատակը անձնական էր: Բայց «եկաւ ժամանակ, որ նորա նպատակը դարձաւ ազգի նպատակը, և ազգային նպատակը դառաւ նորա անձնական նպատակը»<sup>6</sup>: Այդ նպատակը համարելով Իտալիայի վերջնական ազատագրումն ու միավորված Իտալական թագավորություն ունեցալը՝ «Հյուսիսը» դրանում առանձնահատուկ կարևորում է Չ. Գարիբալդու անձը: Ըստ թերթի՝ «Գարիբալդին ազգի մէկ առանձնաշնորհ ժառանգութիւն է, որ ամէն իտալացի կարծում է թէ՛ իւր անյափշտակելի ստացուածն է»<sup>7</sup>: Ռ. Պատկանյանը ճշվող ժողովուրդների ազատության կողմնակից էր: Նա գտնում էր, որ «ուսման, դաստիարակութեան, զոհաբերութեան, ազգասիրութեան, հայրենասիրութեան և այլ բաների մասին քարոզները «դրսեն փայլուն և ներսեն դատարկ» բաներ են, որոնք վաղուց իրենց սպառել են: Խրատով մարդ խելոք չի լինի», ասում էր նա և առաջարկում «ուրիշ ճամփա բռնենք, իսկական փրկավեր, ժողովրդական ճամփան»: Այդ ճանապարհը Ռ. Պատկանյանը համարում էր պայքարը և վկայակոչում Չ. Գարիբալդու օրինակը: Այս մասին նա գրում է. «միթէ Գարիբալդին նախ կրթեց իւր ավագականման զինվորներին և ապա ազատեց ազգը. ու՞ր կուզես նայե, միայն ազատ, ինքնակառավար ժողովուրդը կարող է բարոյապես լուսավորվելու»<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1862, օգոստոս, թիվ 8, էջ 91-103; սեպտեմբեր, թիվ 9, էջ 144-152; հոկտեմբեր, թիվ 10, էջ 187-195; նոյեմբեր, թիվ 11, էջ 232-242:

<sup>2</sup> Նույն տեղում, 1862, դեկտեմբեր, թիվ 12, էջ 250, 257:

<sup>3</sup> Տե՛ս «Հյուսիսափայլ», 1861, մարտ, թիվ 3, էջ 192-221; ապրիլ, թիվ 4, էջ 290-321; հուլիս, թիվ 7, էջ 34-53; օգոստոս, թիվ 8, էջ 015-124:

<sup>4</sup> «Հյուսիսափայլ», 1861, մարտ, թիվ 3, էջ 192:

<sup>5</sup> «Հյուսիսափայլ», 1861, օգոստոս, թիվ 8, էջ 124:

<sup>6</sup> «Հյուսիս», Պետերբուրգ, 1864, թիվ 23, էջ 177:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Պատկանյան Ռ., Երկերի ժողովածու, հ. VI, Ե., 1974, էջ 435-437:

Ռուսահայ պարբերականները գրեթե միահամուռ դրվատում էին Նաև Կ. Կավուրի և Վիկտոր Էմմանուել II-ի ջանքերը Իտալիայի միավորման գործում: «Մասյաց աղավնին» Կ. Կավուրին համարում է «Եվրոպական ինքնիշխանութան գլխաւոր պատճառներէն մէկը»: Ամսագիրը Կ. Կավուրին անվանում է «հռչակաւոր մարդ», «հայրենասէր, քաղաքագետ, խոհական խորհրդական, գործունէայ անխոնջ իշխանաւոր, ով իր գիտակցական «կեանքը նուրբեր էր ազատ, միացեալ և զօրաւոր ընելու Իտալիան»<sup>1</sup>: «Հյուսիսափայլը» կոմս Կ. Կավուրին համարում է իտալական ազգային «շարժողութան գաղափարի հեղինակը, գոնէայ նորա փոխանորդը, միջնակետը, ազդող հոգին», ում բավարարեց ընդամենը մի քանի տարի, որպէսզի իր անունը հնչի ամբողջ Եվրոպայում<sup>2</sup>: Կ. Կավուրի մեծությունը ներկայացնելու նպատակով Ստ. Նազարյանցը անգլիական հեղինակավոր մի շարք թերթերից թարգմանաբար տպագրում է նրա մահվան կապակցությամբ լույս տեսած հոդվածները<sup>3</sup>: «Մասյաց աղավնին» ընդգծում է Վիկտոր Էմմանուել II-ի հայրենասիրությունը, ով անտեսելով իր ազգակցական կապը Ավստրիական կայսերական ընտանիքի հետ, հարմար առիթի էր սպասում «Աւստրիոյ լուծը խեղճ Իտալիոյի վերայից» թողափելու և «հայրենիքը իւր կործանմանէն վերականգնելու» ուղղությամբ: 1859 թ. պատերազմում նա հաղթեց, ապա հռչակվեց Իտալիայի թագավոր: Ամսագրի կարծիքով Վիկտոր Էմմանուել II-ը «ժամանակիս ամենէն անուանի թագաւորներէն մէկն է, որոյ անունը Եւրոպիոյ արդի պատմութեանը մէջ պատուաւոր տեղի մը պիտի ունենայ»<sup>4</sup>:

«Մասյաց աղավնին» համոզված էր, որ վաղը թե ուշ Վենետիկն ու Յոնիան միանալու են Իտալական թագավորությանը: Այս միտքն ամսագիրը բազմիցս արտահայտում է դեռ պատերազմի ժամանակ, բայց հերթական անգամ դա ընդգծում է՝ հենվելով Իտալիայի կառավարության նոր ղեկավար Բետտինո Ռիկազոլիի հայտարարության վրա: Վարչապետն ասել էր. «Իտալիան իրաւունք ունի իւր միութիւնը ամբողջացնելու»: Ըստ ամսագրի՝ այդ գործը հարկավոր է «այնպէս կատարուի, որ ոչ Իտալիան վրդովի և ո՛չ Եւրոպան»<sup>5</sup>: Ամսագրի դիտարկմամբ՝ թեև մեկուկես տարուց ավելի է, որ իտալացիները պահանջում են Յոնիան իրենց հանձնել որպէս երկրի մայրաքաղաք, բայց այդ արդարացի պահանջը չի կատարվում Յոնի պապի դիմադրելու պատճառով: Ստեղծված իրադրությունում իտալացիներն իրենց հայացքը հառել են Կապրերա կղզուն, որտեղից «կսպասեն Իտալիոյ կատարեալ ազատութիւնը Կարիպալտիին ձեռքովը»<sup>6</sup>: «Մասյաց աղավնին» տպագրում է Կապրերայից իտալացիներին հղած Ձ. Գարիբալդու նամակները, որտեղ նա իր հայրենակիցներին կոչ էր անում զորանալ, համախմբվել, զենք վերցնել, Ավստրիայի դատաստանը տեսնել ու ժամ առաջ հաղթանակի հանդես կատարել: «Յայտնի բան է, — գրում է ամսագիրը, — որ իտալական դիւցազին այսպիսի խօսքերը մեծ ոյժ ունին եւ պիտի ունենան իւր հայրենակցացը վրայ»<sup>7</sup>: 1862 թ. հունիսին «Մասյաց աղավնին» կարծիք է հայտնում, որ Ձ. Գարիբալդին հարմար առիթի է սպասում «Իտալիոյ միութիւնը ամբողջացնելու համար»<sup>8</sup>, քանի որ Յոնի խնդիրը չի լուծվում իտալացիների «ուզածին պէս»: Ամսագիրը տպագրում է Ձ. Գարիբալդու հայտարարությունը, որտեղ նա իտալացի հայրենասերներին կոչ էր անում «Յոն կամ մահ» կարգախոսով կրկնել 1860 թ. արշավանքը և այս անգամ ազատագրել Յոնը: Մինչդեռ Վիկտոր Էմմանուել II-ը դատապարտեց Ձ. Գարիբալդու քայլը, իտալացիներին հորդորեց չզնալ նրա հետևից՝ խոստանալով, որ «երբ այն մեծ գործողութան ժամանակը հասնի, ինքը պատրաստ է իսկոյն ձայնը հանելու»<sup>9</sup>:

<sup>1</sup> «Մասյաց աղավնի», 1861, 1 հուլիսի, թիվ ԺԳ, էջ 156:

<sup>2</sup> Տէ՛ս «Հյուսիսափայլ», 1861, հունիս, թիվ 6, էջ 500:

<sup>3</sup> Տէ՛ս նոյն տեղում, էջ 500-504:

<sup>4</sup> «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 149:

<sup>5</sup> Նոյն տեղում, 1861, 1 հուլիսի, թիվ ԺԳ, էջ 156:

<sup>6</sup> Նոյն տեղում, 1862, 1 ապրիլի, թիվ Է, էջ 81:

<sup>7</sup> Նոյն տեղում, 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 129:

<sup>8</sup> Նոյն տեղում, 1862, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 155:

<sup>9</sup> Նոյն տեղում, 1862, 1 օգոստոսի, թիվ ԺԵ, էջ 177:

«Չամբավաբեր ռուսիոյի» պատմելով՝ Չ. Գարիբալդին սակավաթիվ կամավորներով կրկին գնաց Սիցիլիա՝ հույս ունենալով, Յոզեֆ վրա արշավելու ժամանակ «բոլոր Իտալիան կմիանայ Նորայ հետ»։ Բայց թագավորական զորքի հետ առաջին հանդիպման ժամանակ Չ. Գարիբալդու վրա կրակ բացեցին «որպես ապստամբի վերայ», այն դեպքում, երբ նա իր կամավորներին հրամայել էր տեղից չշարժվել։ Չ. Գարիբալդին վիրավորվեց, գերի ընկավ և փակվեց Վարինյան բերդում և միայն հոկտեմբերի 5-ին ներում ստացավ<sup>1</sup>։ «Մասյաց աղավնին» հավաստի<sup>2</sup> պատմում է Չ. Գարիբալդու՝ Նոր արշավանքի, օգոստոսի 29-ին Ասպրոմոնթե լեռան վրա թագավորական զորքի հետ հարկադրված ընդհարվելու, ծանր վրավորվելու, Ռեջիոյի բերդում առաջին բժշկական օգնություն ստանալու և Սպեցիա կղզում ու Վարինյան բերդում բանտարկվելու մասին։ «Չարմանալի տեսարան, — գրում է ամսագիրը, — Իտալիան ազատողն ու Վիկտոր Էմմանուելին ձեռքը տուողը այնքան վեհանձնութեամբ, նոյն միջոցին նոյն թագաւորին զորացը ձեռքը գերի բռնեցաւ խեղճութեամբ»<sup>3</sup>։ Ամսագիրը հավաստի պատմում է, որ ներում ստանալուց հետո Չ. Գարիբալդին մերժել է ապագա կացության վերաբերյալ իշխանությունների բոլոր առաջարկությունները և վերջերից ապաքինվելուց հետո կրկին վերադարձել Կապրերա։ «Մասյաց աղավնին» դժվարանում էր կանխատեսել, թե որքա՞ն կտևի Չ. Գարիբալդու մեկուսանալը, բայց վստահ էր, որ նա չի հաշտվել իր կարգավիճակի հետ։ «Ասփրոմոնթեի յաղթուողը, — գրում է ամսագիրը, — հարկաւ հանգիստ պիտի չառնու՝ մինչեւ որ փառաւորագոյն յաղթութեամբ մը իւր աղօռացեալ փառացը վրեժը չառնու»<sup>4</sup>։ Ասպրոմոնթեի արշավանքի անհաջողությունը անհետևանք չմնաց՝ դառնալով ևս մեկ քայլ Իտալիայի ամբողջական միավորման ճանապարհին։ 1862 թ. դեկտեմբերի 1-ին Ու. Ռատացցիի կառավարության հրաժարականից հետո «Մասյաց աղավնին» նկատում է, որ Նոր կառավարության «ընթացքը խոհեմական է»։ Կառավարությունը ցանկանում է ամենից առաջ երկրի ներսում կարգուկանոն հաստատել և հետագա «ժամանակին թողուլ Յոզեֆի հարցը՝ առանց յուսահատելու»<sup>5</sup>։ Վերլուծելով 1863 թվականին Իտալական թագավորության ներքին վիճակը՝ «Մասյաց աղավնին» գրում է, որ ամբողջ տարին իտալացիները անգործ անցկացրեցին՝ զինադադար հայտարարած քաջ զինվորների նման։ Նրանք մեծ հույսեր են կապում 1864 թվականի հետ և անպայման կձգտեն ձեռք բերել իրենց «երկու մեծամեծ ազատութիւնները... այսինքն Վենետիկն ազատեն Աւստրիոյ ձեռքէն, եւ Յոզեֆը պապին տիրապետութենէն ու Գաղղիոյ պաշտպանութենէն։ Աստուած չամըչցընէ»<sup>6</sup>։

Ռուսահայ պարբերականները դադարեցին լույս տեսնել մինչ Վենետիկի ու Յոզեֆի ազատագրվելը և Իտալիայի վերջնական միավորումը։ Չնայած դրան՝ այդ պարբերականները ժամանակին արտահայտեցին իրենց դիրքորոշումը իտալական ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ Նրանց հրապարակումների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ պարբերականները 1859 թ. սկսված իտալական ազատագրական պատերազմը լուսաբանել և գնահատել են ելնելով իրենց գաղափարական ուղղվածությունից։ Հայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Ճռաքաղը», ազատական հոսանքի ձայնավող հանդիսացող «Յոլուսիս» և «Յոլուսիսափայլ» ամսագրերը, թեև իտալացիների պայքարը անմիջականորեն չեն լուսաբանել, բայց և այնպես իտալական խնդիրը չեն անտեսել։ «Չամբավաբեր ռուսիո» թերթը 1861-1862 թթ. հրապարակումներում բազմիցս անդրադարձել է իտալացիների խնդրին, ընդգծել նրանց պայքարի ազատագրական լինելը, իսկ Իտալական թագավորության կազմավորումը համարել համաշխարհային պատմության կարևոր դեպ-

<sup>1</sup> Տե՛ս «Չամբավաբեր ռուսիո», 1862, 10 դեկտեմբերի, թիվ 38, էջ 4:

<sup>2</sup> Տե՛ս «История Италии», т. 2, էջ 245-246; «История XIX века», т. 5, էջ 288:

<sup>3</sup> «Մասյաց աղավնի», 1862, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:

<sup>4</sup> Նույն տեղում, 1863, 15 հունվարի, թիվ Բ, էջ 27:

<sup>5</sup> Նույն տեղում, 1863, 15 փետրվարի, թիվ 3-4, էջ 60:

<sup>6</sup> Նույն տեղում, 1864, 15 հունվարի, թիվ Ա, էջ 18:

քերից մեկը: Ռուսահայ պարբերականներից իտալական իսնդրին պարբերաբար անդրադարձած «Մասյաց աղավնի» ամսագիրը ոչ միայն բազմիցս ընդգծում է իտալացիների պայքարի ազատագրական բնույթը, օտարի տիրապետությունը թոթափելու նրանց իրավացիությունը, այլև հավատում էր Իտալիայի անխուսափելի միավորմանն ու հզորացմանը: Ամսագիրը 1861 թ. Իտալիայի մասնակի միավորումից հետո կասկած չունեի, որ նոր թագավորությունը հետզհետե պետք է հզորանա, հաղթի Ավստրիային և հաղթահարի Յոնի պապի դիմադրությունը: «Մասյաց աղավնին» ավստրիական լծից ազատագրումը և Իտալիայի միավորումը համարում է բոլոր իտալացիների փափագը<sup>1</sup> և վստահաբար կանխատեսում, որ Վենետիկի ու Յոնի միավորումով Իտալական թագավորությունն անցնելու է Եվրոպայի «առաջնակարգ տերությունների շարքը»<sup>2</sup>: 1863 թ. ամռանը, երբ Իտալական թագավորությունում հարաբերական անդորր էր, «Մասյաց աղավնին» շարունակում է հավատալ, որ «Իտալիա՝ պատերազմական հոգևով լցուած, ազգային ազատութեան կրակովը վառուած»<sup>3</sup> սպասում է Վենետիկի ու Յոնի ազատագրմանը: 1864 թվականին իտալացիներին սպասվող երկու մեծագույն ազատությունը «Մասյաց աղավնին» առաջվա պես համարում է Վենետիկը՝ ավստրիական, իսկ Յոնը՝ պապի տիրապետությունից ու Ֆրանսիայի պաշտպանությունից ազատագրելը<sup>4</sup>: «Մասյաց աղավնու» կանխատեսումը Իտալիայի ամբողջական միավորման անխուսափելիության մասին կատարվեց 1866 թվականին, ազատության համար երրորդ պատերազմի արդյունքում: 1866 թ. հոկտեմբերի 3-ի Վիեննայի հաշտության պայմանագրով Ավստրիան Վենետիկի նահանգը զիջեց Նապոլեոն III-ին, ով այն հանձնեց Իտալիային: Յոնը վերջնականապես Իտալիային միացավ 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ Նապոլեոն III-ը ֆրանսիական կայսրըն այնտեղից դուրս բերեց և սեպտեմբերի 20-ին Յոն մտան իտալական կամավորներն ու Վիկտոր Էմմանուել II-ի զորքը: Պիոս IX պապի աշխարհիկ իշխանությունը տապալվեց, իսկ հոկտեմբերի 2-ի հանրաքվեի արդյունքում Յոնը միավորվեց Իտալիային: 1871 թ. Իտալիայի մայրաքաղաքը Ֆլորենցիայից տեղափոխվեց Յոն, որով ավարտվեց իտալական ազգային պետության ստեղծումը<sup>5</sup>:

**Феликс Мовсисян, ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.** Итальянская национально-освободительная борьба XIX века нашла широкий отклик в армянской периодической печати того времени, в том числе в армянской прессе, издававшейся в России. Рупор армянского национально-консервативного направления, газета «Амбавабер Русию» («Вестник Руси»), обращаясь к освободительной борьбе угнетенных народов, основной причиной их «национального пробуждения» считала политическую систему, утвержденную на Венском конгрессе 1815 года, которая сохранила их зависимое положение от европейских монархий. Политическую раздробленность итальянских государств газета считала «уродливой смесью», где не было никакой сложившейся цели, кроме политического господства Австрии. Причиной поражения итальянской освободительной борьбы 1830-1840-х годов, по мнению газеты «Амбавабер Русию» («Вестник Руси»), стали отсутствие сплоченности итальянцев и вмешательство европейских стран.

<sup>1</sup> *Նույն տեղում, 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 119:*

<sup>2</sup> *Նույն տեղում, 1862, հունվար, թիվ Ա, էջ 18:*

<sup>3</sup> *Նույն տեղում, 1863, 15 հուլիսի, թիվ ԺԷ, էջ 224:*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում, 1864, 15 հունվարի, թիվ Ա, էջ 17:*

<sup>5</sup> *Տե՛ս «История Италии», т. 2, էջ 251; Канделоро Дж., *История XIX века*, т. 5, էջ 304:*

По наблюдениям журнала «Масьяц агавни» («Масисский голубь»), итальянцы, восставшие против ненавистного австрийского господства и боровшиеся за свою независимость, потерпели поражение, потому что патриотический дух еще не до конца влился в их сердца. Обращаясь ко второй итальянской освободительной войне, начавшейся в 1859 году, «Амбавабер Руссио» («Вестник Русии») и «Масьяц агавни» («Масисский голубь») утверждали, что она приковала к себе внимание европейских государств, которые руководствовались прежде всего своими политическими интересами. Эти периодические издания рассказывали о победах, которые одержали итальянцы в начале войны, и сожалели, что блестяще начатая война не оправдала желаний и надежд итальянского народа. Объединение Ломбардии и итальянских герцогств с Пьемонтским королевством эти периодические издания справедливо не считали решением итальянского вопроса.

«Масьяц агавни» («Масисский голубь») признавал, что Италия имеет право на целостное объединение. Журнал не сомневался, что Венеция и Рим также должны присоединиться к новому итальянскому королевству, которое, постепенно усиливаясь, станет одной из ведущих стран Европы.

Армянские периодические издания либерального направления: «Юсисапайл» («Северное сияние») и «Юсис» («Север») к итальянской освободительной борьбе непосредственно не обращались. Они предпочитали рассказывать о герое итальянской борьбы Дж. Гарибальди, целью жизни которого, по их мнению, было объединение Италии. Все периодические издания, выходявшие в России, в один голос подчеркивали роль Пьемонтского короля Виктора Эммануила и премьер-министра К.Кавура в сплочении и объединении итальянских государств.

**Ключевые слова:** Италия, Рисорджименто, национальная борьба, независимость, объединение, Австрия, Пьемонт, Виктор Эммануил, К.Кавур, Дж.Гарибальди.

***Felix Movsisyan, ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.*** The 19th-century Italian liberation struggle found a warm response in the Armenian press media of that time including some periodicals issued in Russia. The speaker of the newspaper of the Armenian conservative current “The Hambavaber Rusio” (“The Messenger of Russia”) touched upon the oppressed peoples’ liberation struggle. They thought that the main reason of the Italians’ national “inflammations” was the very political order ratified at the Vienna summit in 1815, which fixed their dependence on European monarchies. The newspaper called the political division of the Italian states “an odious mixture”, in with no purpose and sense, except political supremacy of Austria. According to the mentioned “Hambavaber Rusio”, the Italian liberation struggle sustained a defeat in 1830-40s because of their non-consolidation, as well as interference of European states. According to the observation of the magazine, the Italians struggling for their independence against the hateful Austrian rule suffered a defeat as “the spirit of freedom hadn’t yet reigned in their hearts at that very time”.

Touching upon the second Italian liberation struggle in 1859, both “The Hambavaber Rusio” and “The Dove of Masis” stated that it drew the attention of all European states, in which they, first of all, saw their own political interest. These periodicals wrote about the Italians’ victory at the beginning of the war and were sorry for the Italian people as their struggle didn’t justify their hopes. These periodicals stated that the unification and consolidation of Lombardia, Italian dukedoms and the Kingdom of Piedmont weren’t the best solutions to the Italian problem. “The Masyats Aghavni” was of the opinion that Italy had the right to complete its union. The magazine had no doubt that Venice and Rome would necessarily unite with the

Italian new kingdom, which would surely gain strength and become one of the advanced European countries.

The periodicals “The Hyusisapayl” and “The Hyusis” (representatives of Armenian liberal current), didn’t directly touch upon the Italian liberation struggle. Instead, they preferred to speak especially about J.Garibaldi, the hero of the Italian struggle, whose main aim of life was nothing but unification and consolidation of his motherland. At the same time, the Russian-Armenian periodicals emphasized the roles of the King of Piedmont Victor Emmanuel and Prime Minister K.Kavour in consolidation and unification of Italian states.

**Key words:** Italy, Risorgimento, national struggle, independence, unification, Austria, Piedmont, Victor Emmanuel, K.Kavour, J.Garibaldi.